Ուսանողի ակտիվության գնահատման համակարգ

1.Սահմանում

«Ուսանողի ակտիվության գնահատման համակարգը» հանդիսանում է ուսանողական խորհրդարանի ներքին կարգավորում, որով սահմանվում են ուսանողական ինքնակառավարման մարմինների կազմում գործունեություն ծավալող ուսանողների ակտիվության օբյեկտիվ գնահատման չափանիշներն ու դրանց կիրառման կարգը:

2.Կիրառման շրջանակ

Սույն համակարգի պահանջները տարածվում են Երևանի պետական բժշկական համալսարանի բոլոր ուսանողական ինքնակառավարման մարմինների կազմում գործունեություն ծավալող ուսանողների վրա:

3. Գնահատման համակարգի նպատակները

1. Սահմանել ինքնակառավարման մարմինների անդամների գործունեության գնահատման միասնական համակարգ:
2. Թափանցիկ և արդարացի գնահատման կազմակերպում ապահովելով, որ յուրաքանչյուր անդամի գործունեությունը գնահատվի հստակ սահմանված չափորոշիչներով, առանց սուբյեկտիվ մոտեցումների:
3. Խթանել ինքնակառավարման մարմնում ուսանողի անհատական պատասխանատվությունը՝ իրենց հանձնարարությունների և ընդհանուր աշխատանքների նկատմամբ:
4. Աշխատանքներում յուրաքանչյուր անդամի ներդրումը գրանցել հստակ և չափելի ցուցանիշների ձևով, *որոնք կարող են ծառայել որպես հիմք ուսանողի ընտրության և ներգրավման համար՝ տարբեր հնարավորությունների դեպքում:*
5. Մրցակցային միջավայրի ձևավորում, առողջ մրցակցության ապահովմամբ:

4. Գնահատման համակարգի սկզբունքները

Գնահատումը կատարվում է բաց միավորային համակարգով, ուսանողը կարող է հավաքել այնքան միավոր որքան ցանկանա՝ իր ակտիվությանը համապատասխան: Ուսանողների ակտիվության գնահատման արդյունքները ամփոփվում են մեկ ուսումնական տարվա կտրվածքով պարզ թվաբանական հաշվարկի միջոցով:

1. Օբյեկտիվություն – գնահատումն իրականացվում է միայն նախապես սահմանված չափորոշիչների հիման վրա, բացառելով սուբյեկտիվ վերաբերմունքը:
2. Թափանցիկություն – համակարգը հասանելի է բոլոր անդամների համար, արդյունքները հրապարակվում են պարզ և բաց ձևով:
3. Արդարացիություն – յուրաքանչյուր անդամ ստանում է միավորներ իր ներդրման համեմատ, առանց արտոնյալ մոտեցումների:
4. Հավասար հնարավորություններ – բոլոր անդամներն ունեն նախաձեռնություն ներկայացնելու, նախագծերի և հանձնարարությունների մեջ ներգրավվելու հավասար իրավունք:
5. Հաշվետվողականություն – յուրաքանչյուր անդամ պատասխանատու է իր ստանձնած պարտականությունների և կատարված աշխատանքի համար: Գնահատման համակարգում կիրառվում է և բոնուսային և մինուսային մեխանիզմներ:

5 Գնահատման ուղղությունները

Գնահատման հիմքում դրված են երեք հիմնական ուղղություններ, որոնք համապարփակորեն արտացոլում են՝

1. **Մասնակցություն → ապահովում է բազային ներգրավվածությունը,**
2. **Նախաձեռնողականություն → ստեղծում է զարգացման դինամիկա,**
3. **Կատարողականություն → ապահովում է գործնական արդյունք:**

1 Մասնակցություն (ներկայություն)

Ներկայությունը անդամակցի պատասխանատվության և նվիրվածության առաջին ցուցիչն է: Առանց համակարգային ներկայության հնարավոր չէ ապահովել ինքնակառավարման մարմնի գործունեության շարունակականությունը և կայունությունը: Նիստերին և աշխատանքային քննարկումներին մասնակցող անդամները ոչ միայն տեղեկացված են ընթացիկ գործունեությունից, այլև ներգրավված են որոշումների կայացման գործընթացում: Գնահատվում է ուսանողների ներգրավվածությունը ինքնակառավարման մարմնի գործունեության տարբեր ձևաչափերում, մասնավորապես՝

- Ինքնակառավարման մարմիներում գումարված հերթական և արտահերթ նիստերին մասնակցությունը,
- Արտահամալսարանական միջոցառումներին, այն պարագայում երբ ուսանողը ներկայացել է որպես խորհրդարանի ներկայացուցիչ,

- Համալսարանի կառավարման և խորհրդատվական մարմիններում խորհրդարանի ներկայացուցիչ լինելու և արդյունավետ մասնակցություն ցուցաբերելու հանգամանքը:

2.Նախաձեռնողականություն

Նախաձեռնող անդամները ապահովում են ինքնակառավարման մարմնի դինամիկան, նորարարական մոտեցումները և ուսանողական համայնքի խնդիրների հասցեական լուծումները: Նախաձեռնություն է համարվում անդամակցի կողմից առաջարկված և իրագործման համար ներկայացված գաղափար կամ ծրագիր, որն ուղղված է ուսանողական կյանքի, համալսարանի կամ ուսանողական մարմինների գործունեության բարելավմանը: Նախաձեռնությունը կարող է ներկայացվել անհատի կամ խմբի կողմից, հետևյալ հիմնական ուղղություններով՝

1. Համալսարանական միջավայրի և կրթության բարելավման նախաձեռնություններ: Նպատակ ունեն բարելավել ուսանողների կրթական միջավայրը և մասնագիտական զարգացումը: Մասնավորապես՝

- Սեմինարներ, դասախոսություններ, ուսուցողական ծրագրեր:
- Քննությունների նախապատրաստական ծրագրեր:
- Բուհի կրթական գործընթացների բարելավման առաջարկներ:
- Ներքին կառավարման, ենթակառուցվածքների և կանոնակարգերի կատարելագործման առաջարկներ:

2. Գիտական նախաձեռնություններ: Ստեղծում են ուսանողների համար հնարավորություններ մասնակցելու գիտական աշխատանքներին և համագործակցելու գիտական հանրության հետ: Մասնավորապես՝

- Ուսանողական գիտական կոնֆերանսների կազմակերպում:
- Տարբեր հետազոտական խմբերի ձևավորում :
- Գիտական հոդվածների պատրաստում և տպագրության աջակցում:
- Գիտաժողովների մասնակցության կազմակերպում:
- Գիտահետազոտական ծրագրերի կազմակերպում:

3. Մշակութային նախաձեռնություններ

Նպատակ ունեն խթանելու ուսանողական համայնքի մշակութային ակտիվությունը, նպաստելու ուսանողների ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու արդյունավետ ազատ ժամանակի կազմակերպմանը: Մասնավորապես՝

- Ուսանողական փառատոնների և տոնակատարությունների կազմակերպում,
- Թեմատիկ մշակութային երեկոներ, տոնական օրերին նվիրված միջոցառումներ,
- Սպորտային և ինտելեկտուալ միջոցառումներ,

- Ժամանցային միջոցառումներ :

4. Սոցիալական նախաձեռնություններ

Ուղղված են ուսանողների իրազեկվածության բարձրացմանը և սոցիալական խնդիրների բարելավմանը: Մասնավորապես՝

- Սոցիալական աջակցության ծրագրեր:
- Բարեգործական նախաձեռնություններ:
- Հոգեբանական աջակցման սեմինարներ և ակումբներ:
- Ուսանողների իրազեկվածությանը նպաստող քայլեր:

5. Արտահամալսարանական համագործակցային նախաձեռնություններ

Նպատակ ունեն զարգացնել ուսանողական արտաքին կապերը: Մասնավորապես՝

- Համատեղ ծրագրեր այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:
- Համագործակցություն հասարակական բարեգործական կազմակերպությունների հետ:
- Միջազգային ուսանողական ծրագրերի մասնակցություն:
- Համայնքային նախագծեր՝ համալսարանից դուրս սոցիալական կամ մշակութային գործունեությամբ:
- Համագործակցություն այլ արտահամալսարանական կառույցների հետ:

3. Կատարողականություն

Կատարողականությունը անդամակցի կողմից ստանձնած հանձնարարությունների, նախագծերի և պարտականությունների իրականացումն է՝ ժամկետների և որակի պահպանմամբ: Այն գնահատում է ոչ թե գաղափարի ներկայացումը, այլ դրա գործնական իրականացումը և ստացված արդյունքը: Կատարողականությունը ապահովում է ինքնակառավարման մարմնի գործառնական արժեքը: Ըստ այդմ սահմանվում են հետևյալ հաստիքային խմբերը:

Ղեկավար

- Գործառույթները.
  - Սահմանում է ամբողջ ծրագրի ռազմավարությունը:
  - Կազմում է գործողությունների հիմնական պլանը:
  - Ստանձնում է պատասխանատվությունը ամբողջ նախագծի հաջողության կամ ձախողման համար:

    - Ներկայացնում է հաշվետվությունը նախագահությանը:
- Հատկանիշներ.
    - Միշտ միայն **1** հոգի է:
    - Ունի վճռորոշ դեր որոշումների կայացման հարցում:
    - Վերահսկում է մյուս դերակատարների աշխատանքը:
- Գնահատման սանդղակում.
    - Ստանում է ծրագրին հատկացված միավորների **20** տոկոսը:

<u>Կազմակերպիչ</u>

- Գործառույթները.
    - Իրականացնում է նախագծի առանձին բաղադրիչի կոնկրետ կազմակերպչական աշխատանք:
    - Համակարգում է միայն մեկ ուղղություն:
- Հատկանիշներ.
    - Կարող է լինել մի քանի հոգի (կախված նախագծի մասշտաբից առավելագույնը **4**):
    - Ստանձնում է պատասխանատվություն ծրագրի միայն իր դաշտի վրա:
    - Գործում է ղեկավարի վերահսկողության ներքո:
- Գնահատման սանդղակում.

    Ստանում են ծրագրին հատկացված միավորների **20** տոկոսը(հատկացված միավորները բաժանվում են հավասարաչափ):

<u>Կատարող մասնագետներ</u>

- Գործառույթները.
    - Իրականացնում է կոնկրետ մասնագիտական աշխատանք՝ հետազոտություն, զեկույց, մեդիա արտադրանք, դասընթացի բովանդակություն և այլն:
    - Ապահովում է ծրագրի որակական բաղադրիչը:
- Հատկանիշներ.
    - Կարող են լինել մի քանի մասնագետներ՝ ըստ նախագծի կարիքների:
    - Պատասխանատվությունը ստանձնում են կոնկրետ գործողության մասով:
- Գնահատման սանդղակում.
    - Ստանում են ծրագրին հատկացված միավորների **40** տոկոսը

<u>Օժանդակող / Մասնակից</u>

- Գործառույթները
    - Ապահովում է ծրագրի տեխնիկական կամ օժանդակ մասը:
    - Կատարում է սահմանափակ դեր առանց կազմակերպչական պարտականության:
- Հատկանիշներ.
    - Կարող են լինել մի քանի հոգի:

    - Չունեն պատասխանատվություն բովանդակության կամ կազմակերպման վրա, բայց ապահովում են գործընթացի անխափանությունը:
- Գնահատման սանդղակում.
    - Ստանում են ծրագրին հատկացված միավորների **10** տոկոսը:

Մնացյալ տոկոսային բաժինն ըստ ծրագրի յուրահատկության բաշխվում է վերը նշված հաստիքացանկերին, բացառությամբ՝ ղեկավարի:

6 Գնահատման կարգ

<u>**1.** Մասնակցություն (ներկայություն)</u>

1 Ինքնակառավարման մարմիներում գումարված նիստեր

- Գնահատման ենթակա են այն նիստերը, որոնք հստակ գրանցվում են գրանցամատյանում արձանագրությունների տեսքով:
- Յուրաքանչյուր կառուցվածքային միավորի մեկ տարվա ընթացքում կազմակերպված նիստերի ընդհանուր գնահատման միավորը հավասար է առավելագույնը **+40** միավոր (**1** ուսանողի հաշվով):
- Եթե հանձնաժողովի նիստերի թիվը մեծ է, ապա մեկ նիստի կշիռը կլինի ավելի փոքր, որպեսզի ընդհանուր միավորները չգերազանցեն սահմանված գնահատման չափանիշը:
- Նիստերի դեպքում կկիրառվի միայն բոնուսային համակարգ

2. Բուհի կազմում գումարված նիստեր

- Կկիրառվի միայն մինուսային համակարգ
- Հոգաբարձուների խորհրդի, ռեկտորատի, գիտական խորհրդի, ուսումնամեթոդական խորհրդի, ուսումնագիտական խորհրդի, ուսումնամեթոդական հանձնաժողովի, դասախոսների որակավորման հանձնաժողովի նիստերից ուսանողի յուրաքնչյուրի բացակայությունը **-5** միավոր
- Պետական ավարտական քնությունների բողոքարկմանը հանձնաժողովում ընդրկված ուսանողի բացակայությունների դեպքում **-30** միավոր մեկ տարվա համար:

3. Արտահամալսարանական միջոցառումներ

Տրվում է միանվագ մասնակցության համար՝

- Սպորտային միջոցառումներ **+10**
- Մշակութային միջոցառումներ **+10**
- Ինտելեկտուալ խաղեր **+10**
- Գիտական ուսումնագիտական միջոցառումներ **+20**

Հաղթանակի դեպքում մասնակցության համար տրված միավորը կրկնապատկվում է:

2 Նախաձեռնողականություն:

Ծրագրի առաջարկի գնահատականը → ցույց է տալիս գաղափարի արժեքը

Նախագծի առաջարկի ներկայացման կարգը (գաղափարի փուլ)**:**

- Նախագիծ կարող է առաջարկել ինքնակառավարման մարմիներում անդամագրված ցանկացած ուսանող կամ ուսանողների խումբ (առավելագույնը 5 հոգի):
- Առաջարկը ներկայացվում է գրավոր ձևաչափով:
- Համապատասխան հանձնախումբը քննարկում է և կազմում դրական կամ բացասական եզրակացություն:
- Գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով բոլոր չափորոշիչները: Նախաձեռնող(ներ)ին տրվում է միանվագ միավոր անկախ կատարողականից (թիմի դեպքում այն բաժանվում է անդամներն հավասար չափով)**:**

Գրավոր ներկայացում համապատասխան ձևաթերթով (ձևաթուղթ *№* 2)

1. Նախագծի վերնագիր և համառոտ նկարագիր (մինչև 200 բառ),
2. Նպատակներ և ակնկալվող արդյունքներ (հստակ հիմնավորմամբ),
3. Թիրախային խումբ (կուրս, ֆակուլտետ, ամբողջ համալսարան և այլն),
4. Նախնական ռեսուրսների հաշվարկ (ժամանակ, մարդուժ, ֆինանսական միջոցներ),

Գնահատման չափորոշիչների բալային համակարգը

1. Իրատեսականություն և իրականացվելիություն

- Նախագիծը պետք է հնարավոր լինի իրականացնել սահմանված ռեսուրսներով և ժամկետներով:
- Բազային միավոր՝ **10**

2. Ներառականություն և մասշտաբայնություն

Միավորների չափը կախված է նախագծի շահառուների թվից և ընդգրկման մասշտաբից:**|** Մասշտաբ **|** Միավոր **|** (ծրագիրը կամ ենթարկվում է ըստ ուսանողների քանակի կամ ըստ ֆակուլտետների քանակի գնահատման**)**

Ըստ ուսանողների քանակի

- Ծրագրին շահառու ուսանողների թիվը ≤**10 | +1 |**
- Ծրագրին շահառու ուսանողների թիվը **11-99 | +2 |**
- Ծրագրին շահառու ուսանողների թիվը **100–500 | +3 |**
- Ծրագրին շահառու ուսանողների թիվը **501** և ավել **| +5 |**

Ըստ ընդգրկող ֆակուլտետների թվի՝ (ֆակուլտետի կարգավիճակ ունեն ԵՊԲՀ քոլեջը, մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնը, օտարերկրացիների ուսուցման աշխատանքների դեպարտամենտը)

- **1** ֆակուլտետ ընդգրկող ծրագիր **| +5 |**
- **2** ֆակուլտետ ընդգրկող ծրագիր **| +7 |**
- **3** և ավելի ֆակուլտետ ընդգրկող ծրագիր **| +15 |**

Ըստ ծրագրի լեզվական ընդգրկման՝

- Մեկ լեզվով իրականացվող **| +1 |**
- Երկլեզու**| +10 |**
- Եռալեզու**| +15 |**

Արտահամալսարանական ծրագրերի դեքում **| +10 |**

3. Նպատակահարմարություն և ռազմավարական համապատասխանություն

- Նախագիծը համապատասխանում է կանոնադրությամբ սահմանված նպատակներին և խնդիրներին **| +10 |**
- Ծրագիրը աջակցում է ուսանողներին՝ հաղթահարելու տվյալ պահին իրենց առջև ծանրացած խնդիրները**| +5 |**

4. Շարունակականություն

- Միանվագ նախաձեռնություն **| +2|**
- Շարունակական ծրագիր **| +10|**

5. Բոնուսային միավորներ

Բացառիկ ազդեցություն ունեցող նախագիծ**| +10|:** Բացառիկ ազդեցություն ունեցող նախագիծ է համարվում այն նախաձեռնությունը, որը.

- Նորարարական բնույթ ունի – առաջարկում է գաղափար, ձևաչափ կամ լուծում, որը մինչ այդ չի կիրառվել ինքնակառավարման մարմիներում, և որը կարող է բերել նոր փորձառություն ուսանողական համայնքի համար:
- Խորհրդարանի և համալսարանի հեղինակություն բարձրացմանը միտված – ապահովում է խորհրդարանի ներկայությունը և ճանաչելիությունը արտահամալսարանական հարթակներում, նպաստում է բուհի և ինքնակառավարման մարմիների դրական իմիջին հանրային կամ մեդիա դաշտում:

Խմբային աշխատանքի խրախուսման նպատակով խմբային տարբերակով **(1**-ից ավել մինչև **6** ուսանող) նախագծի ներկայացման պարագայում հավելյալ **| +20|**

<u>**3.**Կատարողականություն</u>

Նախագծի ռազմավարական ծրագրի գնահատականը → ցույց է տալիս ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միավորների չափը

Նախագծի իրականացման ռազմավարական ծրագրի ներկայացման կարգը (իրականացման փուլ):

- Նախագծի ռազմավարական ծրագիրը ներկայացնում է նախագծի ղեկավարը:
- Առաջարկը ներկայացվում է գրավոր ձևաչափով:
- Համապատասխան հանձնախումբը քննարկում է և կազմում դրական կամ բացասական եզրակացություն:
- Գնահատումն իրականացվում է՝ հաշվի առնելով բոլոր չափորոշիչները (նախնական բալային հաստատում):
- Մինչև ծրագրի ավարտը բալային բաշխման մեջ հնարավոր են փոփոխություններ հստակ հիմնավորմամբ:
- Ծրագրի ավարտին համապատասխան հանձնախմբի հաստատմանն է ներկայացվում վերջնական բալային բաշխումը:
- Վերջնական հաստատումից հետո հանձնախմբի քարտուղարությունը ստացված միավորները գրանցում է գնահատման համակարգում:

Գրավոր ներկայացում համապատասխան ձևաթերթով **(**ձևաթուղթ *№* **3)**

1. Ծրագրի անվանումը,
2. Նպատակը և ակնկալվող արդյունքները,
3. Շահառուների շրջանակը,
4. Ժամկետներ,
5. Անհրաժեշտ ռեսուրսներ,
6. Կազմակերպիչ թիմը և ներգրավված անդամների անունները,
7. Յուրաքանչյուր անդամի կատարելիք կոնկրետ գործառույթները,
8. Ռիսկերի գնահատում և կառավարման պլան:

Անդամների ներդրման գնահատում

- Ծրագրի պատասխանատուն **(**հեղինակը կամ կազմակերպիչ խումբը**)** պարտավոր է ներկայացնել նախնական բալային առաջարկ յուրաքանչյուր անդամի համար:
- Բալերը տրվում են ըստ ներդրման ծավալի՝ հիմնվելով պաշտոնական չափորոշիչների վրա **(**օր. ղեկավար**-20%,** կազմակերպիչ**-20%,** մասնագետ**-40%,** մասնակից**-10%)**:
- Մնացած **10** տոկոսը ըստ ծրագրի առանձնահատկությունների ծրագրի ղեկավարի հստակ հիմնավորմաբ բաշխվում կոնկրետ հաստիքային խմբին բացառությամբ ղեկավարին հակառակ դեպքում հավասար քանակով բաշխվում է **3** հաստիքային խմբերին:

Գնահատման չափորոշիչների բալային համակարգը

- Նախագծի իրագործման համար տրվող բազային միավոր է հանդիսանում առաջարկի փուլում տվյալ նախագծին տրված միավորի (խմբային տարբերակով ներկայացված ծրագրերի հավելյալ բոնուսները հաշվի չի առնվում) տասնապատիկը։
- Եթե ծրագրի մասնագետների և մասնակիցների հաստիքային ցանկերում ընդգրկված է ավելի քան **30** հոգի ծրագրին տրվում է հավելյալ **100** միավոր, որը բաշխվում է վերը նշված հաստիքացանկի ուսանողների միջև։
- Եթե ծրագիրը իրականացվում է սահմանված ժամկետներում և ծրագրով նախատեսված խնդիրները բավարարված են ծրագրին տրվում է հավելյալ **50** միավոր։
- Եթե ծրագիրը սահմանված ժամկետներում չի իրականացվում ծրագրի ղեկավարին սահմանվում է տույժ **-20** միավոր, կազմակերպչին սահմանվում է տույժ **-10** միավոր
- Եթե ծրագիրը ձախողվում է տույժերը սահմանվում են հետևյալ կերպ՝ ղեկավար-**50** միավոր, կազմակերպիչ- **40**

Վերջնական ամփոփում

- Ծրագրի ավարտից հետո պատասխանատուն՝ ղեկավարը պարտավոր է ներկայացնել իրական մասնակցության հաշվետվություն ավարտական ակտ ձևաթուղթ *№* **4** (հստակ միավորային բաշխմամբ հստակ ուսանողներ) համապատասխան հանձնախմբին:
- Հանձնախմբի դրական եզրակացության դեպքում քարտուղարությունը բալերը գնահատման համակարգում ամրագրում են հաշվետվության հիման վրա:

Միավորների վերջնական անփոփման կարգը ուսումնական տարվա վերջում՝

1. Ուսումնական տարվա վերջում յուրաքանչյուր խորհրդարանի անդամի կողմից հավաքած ակտիվության ընդհանուր միավորները ենթակա են ճշգրտման՝ հաշվի առնելով ուսանողի միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

2. ՄՈԳ-ը հաշվարկվում է **10**-բալանոց սանդղակով: Յուրաքանչյուր ՄՈԳ-ի **1** բալը հավասար է **2%** հավելյալ բոնուսին ընդհանուր միավորների վրա:

3. Վերջնական միավորների հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

- Վերջնական միավոր **=** Հավաքած միավոր **× (1 +** (ՄՈԳ **× 0**. **02))**

Ուսանողին տրված միավորը կարող է բողոքարկվել էլեկտրոնային բազայում միավորները գրանցելուց հետո, **1**

ամսվա ընթացքում՝ դիմելով Հաստատող հանձնաժողով:
Ուսանողին տրված միավորը կարող է բողոքարկվել և տվյալ միավորն ստացած ուսանողի կողմից և մյուս անդամակիցների կողմից: